«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
Տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար
տնտեսագիտության թեկնածու
Լ.Ն.Սարգսյան
28 ապրիլ 2022թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Սեդա Սամվելի Նահապետյանի "Սեփականության կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները սահմանադրականության համատեքստում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

***Մասնակցում էին՝*** Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ*, Տիգրան Հարությունյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ*, Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Սվետլանա Դալլաքյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Լիլիթ Սարգսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սեփականության կառավարման գործառույթները ժամանակակից պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության առանցքային ու անբաժանելի մասն են: Ընդ որում, այս ոլորտում պետությունը հանդես է գալիս, մի կողմից, որպես սեփականատեր (պետական սեփականության մասով, որը ներդրված է ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային կազմակերպություններում), իսկ մյուս կողմից՝ որպես տնտեսության կառավարումն իրականացնող (կարգավորիչ): Այսինքն՝ պետությունը մասնակցություն է ապահովում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ձեռնարկատիրությունում՝ կիրառելով համապատասխան կարգավորման գործիքներ և կառուցակարգեր: Պետության նման երկակի բնույթը՝ որպես սեփականատեր և որպես կարգավորող, իր ազդեցությունն է թողել նրա գործառույթների վրա: Տնտեսությունում պետական սեփականության մեծ տեսակարար կշիռը վկայում է պետության բարձր ազդեցության մասին, և ընդհակառակը: Ու թեև աշխարհի երկրների մեծ մասի համար ավելի հատկանշական է մասնավոր և խառը սեփականությամբ առևտրային կազմակերպությունների գերակայությունը տնտեսությունում, այնուամենայնիվ ներկայումս դժվար է գտնել գեթ մեկ երկիր, որտեղ չկա պետական սեփականություն և պետական ձեռնարկատիրություն:

ներկայումս դժվար է գտնել գեթ մեկ երկիր, որտեղ չկա պետական սեփականություն և պետական ձեռնարկատիրություն:

Հայաստանի Հանրապետությունում 1990-ական թվականներին սկսված պետական սեփականության ապապետականացման գործընթացը, ինչպես նաև ազատական մյուս բարեփոխումները (դրանց միջուկը մասնավոր սեփականության իրավունքի կայացումն էր) արմատապես փոխեց մեր երկրում գոյություն ունեցող սեփականության կառուցվածքը: Եվ եթե Հայաստանի երրորդ հանրապետությունում 1990-ական թվականների սկզբին առկա էր գրեթե համատարած պետական սեփականություն, ապա հիմնականում մասնավորեցման երեք խոշոր և զանգվածային (հողի և գյուղատնտեսական տեխնիկայի, բնակարանային ֆոնդի և պետական գույքի) ծրագրերի իրականացման արդյունքում ավարտվեցին առաջին և երկրորդ ծրագրերով նախատեսված գործողությունները (գործարքները) և ներկայումս ընթանում է միայն երրորդ ուղղությունը՝ պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի տեսքով, որը ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության առաջնահերթություններից է:

Հայաստանի Հանրապետությունում սեփականության կառավարման արդյունավետության բարձրացումը և ոլորտում արմատական փոփոխությունները, անկասկած, պահանջում են տվյալ հարաբերությունների համակարգի ինչպես տեսական, այնպես էլ գործնական բնույթի հիմնահարցերի համալիր հետազոտում, այդ ուղղությամբ ՀՀ կառավարության քաղաքականության հայեցակարգային և ծրագրային մոտեցումների վերլուծություն, առկա հիմնախնդիրների բացահայտում և համապատասխան լուծումների ու հանձնարարականների մշակում: Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի և դրույթների հետազոտությանը, ինչով էլ պայմանավորված է ընտրված թեմայի արդիականությունը:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ-ում սեփականության կառավարման բարելավմանն ուղղված մոտեցումների և միջոցառումների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել սեփականության ձևավորման տեսամեթոդական հիմքերը, դրանց զարգացումը, սեփականության իրավունքների ժամանակակից մեկնաբանություններն ու իրացման հիմնախնդիրները, հետազոտել սեփականության՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի բովանդակությունը, սեփականության իրավունքի սահմանադրականության բնորոշումը և համեմատական բնութագրերը, սեփականության կառավարման գործընթացը,

վերլուծել Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքների բազմազանեցման և ապակենտրոնացման գործընթացը, ներկայացնել այդ գործընթացի առանձնահատկությունները, հետազոտել պետական սեփականության ներդրման հիմնական ոլորտները, այդ կապակցությամբ ուսումնասիրել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, ինչպես նաև պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում սեփականության կառավարման հիմնախնդիրները,

հետազոտել ՀՀ-ում սեփականության իրավունքի ինստիտուտի կայացման հիմնախնդիրները և առաջարկել բարելավման ուղիները, առաջարկել սկզբնական օղակներում (կազմակերպություններում) սեփականության կառավարման արդյունավետության գնահատման մոտեցումներ, առաջարկել պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում տնտեսաիրավական կարգավորման նոր գործիքներ:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են ուսումնասիրությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

1. Տնտեսության պետական կառավարման տեսա-գործնական հիմքերի համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են ազգային տնտեսությունում պետական սեփականության և պետական ձեռնարկատիրության փոխառնչություններն ու սահմանները, դրանց կառավարման արդյունավետության բարձրացման նախադրյալները, հիմնավորվել են տնտեսական քաղաքականության մեջ սեփականության կառավարման բովանդակությունը և գործիքակազմը:

2. Բացահայտվել են ինստիտուցիոնալ բնույթի այն ցուցիչները, որոնք վճռորոշ դերակատարում եմ ունեցել սահմանադրականության դեֆիցիտի կրճատման, սահմանադրականության չափանիշից ելնելով երկրների կլաստերացման համար: Այդ ցուցիչների թվում են գույքային իրավունքների իրացումը, կոռուպցիայի մակարդակը և այլն:

3. Պետության կողմից իր սեփականության իրավունքների իրացման և կազմակերպությունների գործունեության ֆինանսա-տնտեսական արդյունքների վերլուծության արդյունքում բացահայտվել են ՀՀ-ում պետական սեփականության կառավարման վրա ազդող բացասական գործոններն ու ներկայացվել են այդ գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ և միջոցառումներ:

4. Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեությունը խթանելու և պետական ակտիվների շահութաբերության մակարդակը բարձրացնելու համար առաջարկվել են այդպիսի կազմակերպությունների գործունեության գնահատման մոտեցումներ:

5. Պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման մոդելի փոփոխությունը պետք է ապահովի հնարավոր ինքնուրույնություն այդ կազմակերպությունների համար, ինչպես նաև թույլ տա ներդնել առևտրային կազմակերպություններին բնորոշ գործարար և կառավարման կառուցակարգերը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Սեփականության ձևավորման տեսամեթոդաբանական հիմնադրույթները եվ Սահմանադրականությունը անցումային տնտեսությամբ երկրներում»

վերտառությամբ գլխում ուսումնասիրվել են սեփականության՝ որպես տնտեսագիտական կատեգորիայի բովանդակությունը, վերհանվել են սեփականության իրավունքը սահմանադրականության համատեքստում, ինչպես նաև ներկայացնում է սեփականության կառավարման գործընթացը։

Ատենախոսության երկրորդ՝ «Սեփականության կառավարման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում » վերտառությամբ գլխում հեղինակը քննարկել է սեփականության իրավունքների բազմազանեցման և ապակենտրոնացման գործընթացը ՀՀ-ում, որի արդյունքում ձևավորվել է սեփականության ներկայիս կառուցվածքը։

Ատենախոսության երրորդ՝ **«Սեփականության կառավարման և տնտեսաիրավական կարգավորման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ գլխում ներկացավել են սեփականության իրավունքի ինստիտուտի կայացման և բարելավման հիմնախնդիրները ՀՀ-ում։ Այնուհետև հեղինակը ներկայացրել է կազմակերպություններում սեփականության կառավարման արդյունավետության գնահատումը ու պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում տնտեսաիրավական կարգավորման գործիքների ներդրման վերաբերյալ մոտեցումները։

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրակացություններ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում։

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունն իր դրական արժանիքներով հանդերձ ունի որոշակի թերություններ։ Դրանցից կարևորել ենք հետևյալները.

1. Հինգերորդ նորույթը վերաձևակերպման անհրաժեշտություն ունի, քանի որ նշված ձևակերպմամբ հեղինակն առաջարկում է կառավարման մոդելի փոփոխություն, ինչը պետք է ապահովի կազմակերպության համար ինքնուրույնություն՝ առանց որևէ գիտական հիմնավորման։
2. Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված գծապատկեր 3.1-ում՝ վերնագրված «ՊՈԱԿ-ների կառավարման առաջարկվող մոդելը», արտացոլված չեն կառավարվող օբյեկտները, կառավարող սուբյեկտները, ինչպես նաև աշխատանքի ուղղահայաց և հորիզոնական բաժանման շնորհիվ առաջացած կառավարման օղակները և մակարդակները։ 3-րդ գլխի գծապատկեր 3.2-ը վերնագրված է «ՊՈԱԿ-ների ընդհանուր կառուցվածքը»։ Գրված վերնագիրը շատ համապարփակ է և չի արտացոլում գծապատկերի բովանդակությունը։ Մեր կարծիքով վերը նշվածի փոխարեն գծ. 3.2. ցանկալի է վերնագրել «ՊՈԱԿ-ների կազմակերպական կառուցվածքի օրինակելի ձև»։
3. Ցանկալի կլիներ որ ատենախոսը, առավել հիմնավոր և համգամանալից ներկայացներ սեփականության իրավունքի հիմնահարցը։

4. Աշխատանքն առավել կշահեր, եթե հեղինակը անդրադառնար ապօրինի գույքի բռնագանձման կառուցակարգին ժողովրդավարության համատեքստում:
5. Հեղինակի կողմից ներկայացված ատենախոսության յուրաքանչյուր գլուխ ավարտվում է առանց ամփոփման, բացակայում է այդ գլուխը ամփոփող մտքերը, որոնց առկայության դեպքում աշխատանքը կդառնա ավելի հիմնավոր և գիտական:
6. Ատենախոսության մեջ գրականության ցանկը ներկայացվել է այբբենական կարգով, սակայն բացակայում են հղումների համարները տեքստում, որը ԲՈԿ-ի ատենախոսության ձևավորման պահանջներից է՝ https://www.bok.am/sites/default/files/inline-files/aten dzev.pdf:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սեդա Սամվելի Նահապետյանի "Սեփականության կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները սահմանադրականության համատեքստում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսությունը ներկայանում է որպես ամբողջական, ավարտուն և օգտակար հետազոտություն, որում ներկայաղված են սեփականության իրավունքի բազմազանեցման և ապակենտրոնացման գործընթացը ՀՀ-ում, սեփականության իրավունքի խտիտուտի կայացման և բարելավման մոտեցումներ: Հեղինակի գիտագործնական ընդհանրացումները, եզրակացությունները և առաջարկները նոր խոսք են և շոշափելի ներդրում սեփականության կառավարման հիմնախնդիրների, այդ գործընթացի արդյունավետության բարձրացման վերաբերյալ մեթոդական և գործնական մոտեցումներում:

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտակար լինել պետական գույքի կառավարման լիազորություններ ունեցող մարմինների, ինչպես նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետական գույքի կառավարման հիմնախնդիրներով զբաղվողների համար: Կատարված առաջարկությունները, ինչպես նաև պետական սեփականության կառավարման արդյունավետության բարձրացման արդյունքում բյուջետային մուտքերի, կազմակերպությունների սեփական եկամուտների ավելացման և կառավարման որակի բարելավման վերաբերյալ առաջարկված ուղիները կարող են օգտագործվել գործադիր մարմինների, ինչպես նաև առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման մարմինների կողմից՝ իրենց սեփականությունից և պետական բաժնետոմսերից (բաժնեմասերից) ստացվող հասույթի ավելացման նպատակով ու կառավարման որակի բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքների կատարման ժամանակ:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 8 հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդրկունություն:

Այսպիսով՝ Սեդա Սամվելի Նահապետյանի "Սեփականության կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները սահմանադրականության համատեքստում (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսությունը և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 8 հոդվածների հրապարակումները բավարարում են ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակն արժանի է Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (28.04.2022թ., արձանագրություն թիվ 11):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. գիտաշխատող
տնտեսագիտության թեկնածու — Ս. Ա. Դալլաքյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ.առաջատար գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ — Մ. Գ. Մանուչարյան

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Ս.Ա. Դալլաքյանի և նույն ինստիտուտի առաջատար գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու Մ. Գ. Մանուչարյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»*

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ.քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ — Ք. Յու. Բաղդասարյան

«28» ապրիլ 2022թ.

Կ.Տ.